ՈՐՈՇՈՒՄ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 8-ին կայացած նիստի (N 10 արձանագրություն)
Նիստի մասնակիցներ

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 8-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.
<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

/Զեկուցող՝ խորհրդի նախագահ Ս. Մանուկյան/

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319 որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ կետերի պահանջները՝

Խորհուրդը որոշում է՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022 թվականի նոյեմբերի 8-ից հայտարարել մրցույթ:
2. Հաստատել տնօրենի պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N174-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի/ ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի նախագահ Սերգեյ Մանուկյանին և խորհրդի քարտուղար Արմենուհի Գրիգորյանին:

5. Մրցույթն անցկացնել Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2022 թվականի դեկտեմբերի 16 -ին ժամը 14^{00}-ին:

6. Հանձնարարել խորհրդի նախագահ Սերգեյ Մանուկյանին՝ կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճենը և հայտարարության տեքստը մինչև 2022 թվականի նոյեմբերի 10-ը, պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարին և Գեղարքունիքի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Մանուկյան

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 13^{00}-ից մինչև ժամը 18^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի դեկտեմբերի 16-ին՝ ժամը 14^{00}-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ հասցե. ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 1 թղմ., 3 փող., 33 շենք:

Տեղեկությունների համար դիմել Սերգեյ Մանուկյանին, կապ հաստատել 094080959 հեռախոսահամարով կամ գրել tsovinari-mijn@rambler.ru էլեկտրոնային հասցեին: